ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Սովետական Ռեսպուբլիկաների Միությունը քառորդ դար և ավելի է, որ իր ամբողջ մտավոր, բարոյական և նյութական ուժը տրամադրել է Միութենական երկրների շինարարության, նրանց ժողովուրդների տնտեսական հզորացման և մտավոր ու ազգային-կուլտուրական զարգացման գործին: Այս վարքագծի հետևանքով և հայ ժողովրդի քրտնաջան աշխատանքի շնորհիվ է, որ Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներին զուգընթաց նաև Հայաստանն ամբողջ վիճակից վերաշինվել է, տնտեսապես զորացել, զարգացել է նրա կուլտուրան, գիտությունը և արվեստը:

Սովետական Իշխանության շնորհիվ է միայն, որ հայ ժողովուրդը ձեռք բերեց անկախ պետական իշխանություն, որ երազում էր դարեր շարունակ:

Այս խոշոր երևույթները, բնականաբար, ծնել են հայ ժողովրդի մեջ երախտագիտական զգացմունք հանդեպ ռուս մեծ ժողովրդի, Սովետական Իշխանության և նրա հանճարեղ Առաջնորդի: Այս է պատճառը, որ հայ ժողովուրդը, իբրև մի մարդ, ծառացավ Սովետական երկիրը ներխուժող թշնամու դեմ և հայրենական սրբազան պատերազմ մղեց ոչ միայն հանուն իր ազգային անկախության, այլև առավելապես ընդհանուր հայրենիքի, նրա քաղաքական ազատության և տնտեսական ու կուլտուրական նվաճումների պաշտպանության համար:

Մեր նախնիքը դարերի ընթացքում պայքարել են օտար բռնակալների դեմ, որոնք ձգտել են ֆիզիկապես և հոգեպես սարսափեցնել հայ ժողովրդին: Սակայն նա քրիստոնեական ոգով դաստիարակված, հայրենիքի սիրով վառված, իր ազատության և անկախության համար զոհվելու պատրաստ, միշտ պայքարել է նրանց դեմ և եթե ոչ միշտ ֆիզիկապես, բայց բարոյապես միշտ էլ հաղթանակել է:

Հայ ժողովրդի այս ազատասեր և պայքարող ոգու ցայտուն արտահայտություններով ոչ միայն հարուստ է հայոց հին պատմական կյանքը, այլև նորագույն կյանքը: Այդ ոգին հմայիչ պատկերներով դրսևորվել է մեր նոր գրականության, կլասիկ գրողների ստեղծագործությունների մեջ:

Հայ ժողովրդի այդ պայքարող ոգին ապրում է նաև այսօր: Հայ ժողովուրդը չխնայեց իր սիրասուն զավակներին ուղարկել Հայրենական պատերազմի դաշտը, հայրենասեր հին հունական ժողովրդի պատգամը տալով իր մարտիկին՝ «Վահանով կամ վահանիդ վրա», այսինքն կամ մեռի՛ր ռազմի դաշտում, կամ վերադարձի՛ր հաղթանակով:

Պարծանքով պիտի շեշտեմ, որ հայ զինվորը պատվով կատարեց հայրենի ժողովրդի սրբազան պատգամը: Իր անձնվեր հերոսությամբ Հայրենական պատերազմում հայ մարտիկը հայ ժողովրդի մարտական ոգու նոր ու փայլուն օրինակներ

հանդես բերեց և հաղթանակի փառքով պսակեց հարազատ ժողովրդին և իրեն։ Անձնուրացության և ջերմ հայրենասիրության վեհ զգացմունքներով տոգորված բազմաթիվ հայ հերոսներ ու դեներալներ դարձան աշխարհի սեփականություն, իսկ նրանց անունները զարդարեցին պատմության էջերը։ Հայ ժողովրդի սիրելի մարտիկները արժանացան ամենամեծ պատվի՝ Մեծ Առաջնորդի գովքին ու պարգևատրման։

Հայ ժողովուրդը թիկունքում կատարած իր անդուլ աշխատանքով՝ հերոսական Կարմիր Բանակին մատակարարելով ամենատեսակ զինական և պարենային մթերքներ՝ իր հերթին ևս նպաստեց թշնամուն ջախջախելու և մեր երկրից արագ վանելու։

Արտասահմանի հայությունը նույնպես հետ չմնաց մայր երկրում ապրող իր հարազատներից՝ նվեր բերելով Հայրենական պատերազմի հաջողության համար իր խնայողություններն ու քրտնաջան աշխատանքի պտուղները։ Արտասահմանի հայության և Մայր երկրի հավատացյալների նվիրաբերության շնորհիվ պատրաստվեցին ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ անվան տանկային շարասյուներ, որոնք արդեն մեկնել են ճակատ երդվյալ քաջամարտիկներով և անձնվիրաբար կռվելով թշնամու դեմ ջախջախում և դուրս են քշում նրան մեր հարազատ հողից։

Այդ է ասում Զինվորական Ինչանության պաշտոնական հեռագիրը, որ զետեղված է «Էջմիածին» ամսագրում։

Այսպես, ուրեմն, Հայրենական պատերազմը ոչ միայն առիթ հանդիսացավ հայ ժողովրդի համար իր պատմական մարտական ոգին ցուցաբերելու, իր ազատությունն ու անկախությունը անձնվիրաբար պաշտպանելու, այլև ցայտուն առիթ ծառայեց ապացուցանելու հայ ժողովրդի նվիրվածությունը ընդհանուր Հայրենիքին և անխախտ բարեկամությունը հանդեպ ռուս մեծ ժողովրդի։

Հայրենական պատերազմի օրերին Սովետական Միության խաղաղասեր քաղաքականությունը էլ ավելի ուժեղացրեց համակրանքը աշխարհի ազատասեր և դեմոկրատական երկրների ժողովուրդների մեջ, դեպի հերոսական Կարմիր Բանակը և դեպի Սովետական Միության ժողովուրդները։ Հայրենական պատերազմի պայմաններում հաստատվեցին սերտ բարեկամական հարաբերություններ Սովետական Միության և դեմոկրատական երկրների ժողովուրդների միջև հասնելու այն բարձր նպատակին, որին ձգտում են աշխարհի խաղաղասեր ժողովուրդները՝ ջախջախել ֆաշիզմը, ոչնչացնել խաղաղության թշնամիներին և աշխարհում ստեղծել մշտական խաղաղություն։

Այդ սերտ բարեկամական հարաբերությունները Սովետական Միության և դեմոկրատական բոլոր երկրների միջև կշարունակվեն պահպանվել ոչ միայն պատերազմի պայմաններում, այլև պատերազմից հետո, և դա կլինի մշտական խաղաղության ամուր երաշխիքներից մեկը, որը կնպաստի փոխադարձ բարեկամական հարաբերությունների պայմաններում զարգացնելու Միության ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական զինարարությունը։

Սովետական Միության ժողովուրդների տնտեսական հզորացման և առանձին ռեսպուբլիկաների տնտեսական կուլտուրական առանձնահատուկ կարիքները բավարարելու լավագույն միջոցը հանդիսանում է դեմոկրատական երկրներում մեր ժողովուրդների ներկայացուցչություն հաստատելու այն քաղաքական խոշոր ակտը, որ հրատարակվեց Սովետական Միության Գերագույն Սովետի 10-րդ նստաշրջանում։

Այդ խոշոր քաղաքական ակտով Միության բոլոր ռեսպուբլիկաները որպես հավասար անդամ Սովետական Մեծ Միության ընտանիքի, հնարավորություն ունեն կազմակերպելու Պաշտպանության և Արտաքին Գործերի կոմիսարիատներ։

Նոր կոմիսարիատներ են ստեղծվում նաև Հայաստանում։ Այս վկայում է Հայ ժողովրդի քաղաքական գիտակցությունը, նրա հասունությունը և տնտեսական ու կուլտուրական հզորացումը։

Այս ակտը ստեղծում է նոր, էլ ավելի լայնարձակ հեռանկարներ համայն աշխարհի հայության տնտեսական, կուլտուրական վերելքի համար։

Պատմական այս մեծ ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը իր ազատության և անկախության համար մղվող Հայրենական պատերազմում հերոսաբար մարտնչում է կուլտուրայի և մարդկության ատելի թշնամի ֆաշիզմի դեմ, աշխարհի բոլոր երկրներում ապրող մեր հոտի մեջ ավելի ևս ուժեղանում է գիտակցությունը համախմբելու Մայր Հայաստանի, Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի՝ Ս. Էջմիածնի շուրջը, լարելու բոլոր ուժերը, բոլոր հնարավորություններով օժանդակելու մարտի դաշտում կռվող մեր հերոսական ժողովրդի անձնվեր զավակներին և ապահովելու ատելի թշնամու խպառ ոչնչացումը և վերջնական խաղաղությունը։

Մոտ է ժամը, երբ Տիրոջ օգնությամբ հերոսական Կարմիր Բանակը և մեր դաշնակից դեմոկրատական պետությունները հանդես կբերեն իրենց ողջ զինական ուժը և միահամուռ ուժերով վերջնականորեն կջախջախեն մարդկության ատելի թշնամուն, որպեսզի ալեկոծ աշխարհը խաղաղի և հետպատերազմյան մարդկային կյանքը նոր և արդար սկզբունքներով կառուցվի։ Այս կլիներ լավագույն սպեղանին մարդկության կրած անլուր տառապանքների համար։

Մաղթում եմ, որ Ամենաբարձրյալը զորավիգ լինի Կարմիր Բանակին և դաշնակից երկրներին փութացնելու հաղթանակը հանուն արդարության և մշտնջենական խաղաղության։

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ
ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ